



Կանխագիտակ

ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ԷԱՃԱՌԱԿԱՆԱՑ



ԿՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



№ 34



ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ՀԱՅ



ԽԱՌԱՊԱՆԳՈՒԹՅԱՆ

ԱՌՏԱՐԱՆԻ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ Ի ՏՈՒՆԻ

ՄԱՍՆԱՐ ԵՄԵՐԱՆԻ ՄԱՍՆԱՐ

ՄԱՍՆԱՐ



ՅԱՐԱՆԻՑՈՒՄ ԲՆԱԿԱՆՈՒ



ՏԻՄՈՒՆՆԱՐ

ՄԱՍՆԱՐ ԵՄԵՐԱՆԻ



34 թիվ



ՅԱՐԱՆԻՑ

ՄԱՍՆԱՐ ԵՄԵՐԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿ


ՀԱՆՐԱՊԵՏ

✧ هانرا کیدا ق ✧

HANRAKIDAG

Հ Ա Բ Ա Թ Ա Կ Ա Ն **مجموعه علوم** JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 34 || 19 ՕԳՈՍՏՈՍ 1903



ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՇՆՈՐՀԱՌՐՈՒԹԻՒՆ

ՏԱՐԵԴԱՐՁԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ՄԵԾԻՆ ԿԱՅՍԵՐՆ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԿԼ-ՉԱՄԻՏ Բ.

ՕԳՈՍՏԱՓԱՌ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ ԹԱԻՐՔԻՈՅ

ԱՆԼԱՋԷՆ վերջ՝ երկրի վրայ բոլոր շնորհաց միակ աղբիւր
Միահեծան Փառաբանին Տաւեղարձի Տօնին առթիւ ,
Որոտագոյ զոռան ահա թնդանօրներն հրաբերան ,
Տիեզերքին աւետելու բացումն օրուան մեծ Հանդէսին ,
Ու արեւին պայծառութեան չափ վառ փայլիւն ակնախօսիդ ,
Եւ աշխարհին հիացումովն ա՛լ աւելի վեհապառցած ,
Կ'համաափիւռնայ ընդ ծով , ցամաք , ու թուրքիան կ'իջխէ անեղ
Ուր Օսմանեան հիր ու կարմիր դրօշակներն օդապարիկ
Կայմէ ի կայմ , բերդէ ի բերդ , հորիզոնէ ի հորիզոն ,

Տիրած վերեւն ամեն բարձանց, հողմ ծալ ի ծալ կը ծածանին,
Անքիւ, անվերջ յաղթանակաց փառքն հռչակող ծիրանինէ՛ր .
Ուր Օսմանեան գոռ շեփորներ բա՛մբ որոտան ու սարփողեն
Մեր Օգոստոս Փաշեանին Սուլթանական սալթանաքներ ,
Զոր դարձ դարուց պիտի պատեն համաբարբառ ու համեմատ ,
Ներշնչուելով սերունդներուն երախտապարս վեհ հոգիէն .
Այո՛, Հանդեսն է այս հանդես իրաւունքական ու պատմական
Ի յիշատակ ան մեծ Օրին , ուր Ալլահն եր հակասագրած
Որ Թուրքիոյ Կայսր ինի *ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ ԽԱՆԸ ՂԱԶԻ* ,
Կա՛յսր բարի Մեմալիքը Մահրուսէի վերածնող ,
Որ Իրեն հետ Ֆաթիհներու Գահն ամբարձուց զիմաստութիւն ,
Որ Թուրքիան հանդիսացուց հանուրց ազգաց պատկառելի ,
Քաղաքակիրթ իր մեծ խելով պայծառացուց մեծ Թուրքիան ,
Միլիոնաւոր հպատակներն ըրաւ իսաղաղ ու երջանիկ ,
Մէն մին անոնց հանդիսացուց Իր վեհ անձին երախտագէտ .
Գահակալած ան գերապանծ ու եզակի օրէն ի վեր
Աղբերահոս սարածեցան մեծ ոստանէն ցնուսկ աւան ,
Գիտութիւններ , արուեստ , արհեստ եւ գեղեցիկ դպրութիւններ ,
Ստեղծուեցան թուրք հանճարին նորակառոյց բիւր տանարներ ,
Լուսոյ նոր նոր ռահեր պողեց երկաթուղին ցամաքներէն ,
Մթնոլորտէն՝ ելեֆտաքելն , ու ծովերէն՝ նաւաստմիղ ,
Երկաթ ջիղով , երկաթ լեզուով , շոգի բեռով գրկուեցաւ
Տիեզերքին հետ Թուրքիան , համաշխարհաց ուժերն ամեն ,
Հարստագործ մեքենաներն ամենուրեք նուշեցին ,
Հնարագիւտ բարւոյն օգուտ Երջան առին մեր առանցքէն ,
Դրամատունք ու շահաստան հանգրուանէ ի հանգրուան
Ողկուզաւէտ որբասնկաց պէս ուռնացան անումնածիգ ,
Սակարանէ ի սակարան թռան վարկեր , բարձր օր բան զօր ,
Որպէս բանակն ու բաջ տորմիղն յաղթանակէ ի յաղթանակ ,
Ժիր մշակաց արօրին տակ երկիրն եղաւ դրախտ բերրի ,
Տուին հունձներն առաս ստանց պէս իրենց կուրք , բերք ակաղձուն
Պարտաւաստան պարպատելու չափ ամբարներն երկրագործին ,
Հրապարակ առուտուրին լցան արդեամբ Թուրքիային ,
Որ կը գլէ ամեն երկիր իր նահապետ յիւրեանքն յորդ .
Թուրքիացիքս ամեն ազգաց եղանք մըցորդ . նախանձելի ,
Եւ այս բոլոր ու անհամար բարիքներուն իրացանք մեք
Լոկ շնորհիւն ամենակալ , ամենաբար մեր Վեհ . Կայսեր
Որ կը տիրէ Ինքնակալի բոլոր ձրիւնն այնքան անհուն
Արեւն որքան մեր ցերեկին , եւ երկինքին տիրէ լուսին
Յկասարած համաշխարհին եւ ի փառս Թուրքիային :

Մեր Սուրբ Գիրքեր ու Սուրբ նախնիք վարդապետեն մեզ հանապազ
 Թե Թագաւորն երկրի վրայ փոխանորդ է միշտ Աստուածին ,
 Որ անաչառ կը նայի միշտ մեղաւորին ու արդարին
 Հապօ՛ն, ապա , ազգք ու ազինք որ բնակիք ի Թուրքիա ,
 Բարձր արարեք փառքն ու անուն մեր Արքային ամենագոր,
 Այս օր ուր գահն ամբարձաւ Նա , աշխարհակալ գահն Օսմանեան
 Լեզուք ամեն եղիք օրհներգ , ձեռքեր , ամեն ծափ շառաշուն ,
 ձառերն ողջոյն ձեր քող բլլան լոկ գովասանք մեր Արքային .
 Եւ դո՛ւ , Մամուլ , որ Շնորհիւ մեր Վեհ . Կայսեր , ալ չես ամուլ ,
 Լիաւորքն օրհներգութեամբ փառաբանե Շնորհն անոր
 Որ քեզ տուաւ կեանք մը տոկուն եւ լեզու մը միշտ իմաստուն
 Ուրեմն օրհներգ մեր Թագաւոր ու մարքեմք որ Ան շատ ապրի ,
 Ու ձայնարկեմք աշխարհին հետ **ՓԱՏԻՇԱՀԸՄ ՊԻՆԼԷՐ ԵԱՇԱ :**

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆՆԱՆ .

ՏԵՎԵՆԵՆ ՍԱՍՍՈՒԵԼԵՆ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՐԵՐ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

(Շարուն . 33րդ թիւէն)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Դ .

ԱՐԱՐՄԻ , ՍԱԹԵՆԻԿ ԵՒ ՇՈՒՇԱՆ

Շուշ . (մտածկոց) . — Այո՛ , պիտի երթամ , բայց համբերու-
 թիւն : Տիկին Հռիփսիմէն պիտի տեսնէ թէ ես կարծածին չափ
 անխելք չեմ :

Սար . — Ինքնիրե՞նդ կը խօսիս . ի՞նչ կ'ընես , իբր թէ հոս
 մէկը չըլլար :

Շուշան . — Ես բնաւ չհաւնեցայ այս եղածներուն . (ինքնիրեն)
 Միտքս բան մ'եկաւ . . . եթէ ես . . . բայց ինչո՞ւ չէ . . . (կը մտածէ ,
 Սարենիկ եւ Արաֆի մէյմէկ արողի վրայ կը նստին) :

Արաֆ . — Ա՛խ . Սաթենիկ , քոյրս , սիրտս որչափ կը նեղանայ :

Սար . — Իմն ալ , Շուշան , (կը յօրանջէ) , լա՛ւ պատմութիւն
 մը չունի՞ս մեզի պատմելիք :

Շուշան. — Այդչափ կը նեղանա՞ք կոր...

Արաֆ. — Շա՛տ:

Շուշ. — Եթէ ձեր այդ ճանճրոյթը փարատեմ, ի՞նչ պիտի ըսէք:

Սաք. — Այն ատեն պիտի ըսենք թէ ալ չենք ճանճրանար կոր:

Շուշ. — Անանկ է նէ ինծի մտիկ ըրէք: Ես կը խոստանամ ձեզի զուարճացնել, եթէ դուք ալ ինծի խօսք տաք որ նախ մէկու մը չըսէք իմ ընելիքս եւ յետոյ ինծի օգնէք որ կարենամ զայն գործադրել: Ահա՛ թէ ի՞նչ պիտի ընեմ: Քանի որ Տիկին Հռիփսիմէ անպատճառ պզտիկ սպասուհի մը կ'ուզէ եւ քանի որ ինծի ըսաւ թէ երթամ կանչեմ զինքը, կ'երթամ, քանի մը ժամու համար, այս պզտիկին տեղը բռնել, ես վարի շուկան մէկը կը ճանչնամ որ բարեկենդանին հագուստ կը ծախէր, որուն քանի մը ղրուշ տալով կրնամ անկէ ձեռք մը հագուստ վարձել: Տիկինն աչքերը արդէն լաւ չեն տեսներ և ականջներն ալ խուլի պէս են. դուք ալ բնաւ բան մը յայտնի չպիտի ընէք, եւ յետոյ այնչափ պիտի խնդաք որ... հէ՛, ի՞նչ կ'ըսէք:

Արաֆ. — Ինչե՛ր ալ կը մտածես:

Շուշ. (Սաքենիկին). — Եւ դո՛ւք:

Սաք. — Իրաւ որ այս տեսակ բաներ ստեղծելու մէջ շատ վարպետ ես: Եւ քանի որ կը խոստանաս թէ շատ պիտի զուարճանանք, ես ալ քեզի կը խոստանամ՝ մէկուն բան մը չըսել:

Արաֆ. — Բայց մօրաքոյրս ի՞նչ պիտի ըսէ:

Շուշ. — Հիմա պիտի գիտնաս... սո՛ւս... ահա տիկինը կուգայ: (Տիկ. Հռիփսիմէ կուգայ):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Բ.

ՆՈՅԲ ԵՒ ՏԻԿԻՆ ՀՌԻՓՍԻՄԷ

Տիկ. Հռ. — Շուշան, անօգուտ է քու երթալդ այդ սպասուհիին, Պարտիզպանին, Յուսեփ աղբօր ըսի որ ան երթայ:

Շուշ. — Տիկին շատ դժուար է երթալ Սամաթիայի մէջ տուն փնտռելը. և յետոյ ձեզի բան մ'ըսե՞մ, Յուսեփ աղբօր ընելիք գործը չէ աս:

Տիկ. Հռ. — Այդչափ խելացի ըլլալու պէտք չի կայ Ահարոն աղային տունը գտնելու համար:

Շուշ. — Այո, Տիկին, իրաւունք ունիք, բայց Յուսեփ աղբօր ձեռքէն բան մը չի գար, այնչափ խափ է տակաւին. դեռ եկեղեցիի ճամբան չգիտեր չէնք չնորհք, ես պիտի երթամ իր տեղը, Տիկին:

Տիկ. Հո. — Բայց պատճառը ինչ է այդքան պնդելուդ :

Շուշ. — Պատճառը Տիկին, շատ պարզ է. ճամբան կօշկակա-
րին պիտի հանդիպիմ եւ տեսնեմ թէ ապսպրած կօշիկներս լմնցու-
ցած է :

Տիկ. Հո. — Շիտակը, աղջիկ, միտքդ բան մը չի դնես .
առաջ չէիր ուզեր կոր երթալ եւ հիմա մէկու մը թող չես տար
որ երթայ : Գնա՛ ուրեմն, նայէ որ շուտ վերադառնաս : Եւ դուք
քեռորդիներս ինծի հետ եկէք : (Դուրս կ'ելլէ եւ իրեն հետ կը
սանի իր փեռորդիները) :

Տ Ե Ս Ա Ր Ա Ն 2.

ՇՈՒՇԱՆ (Առանձին)

Հիմա երթանք վարը շուկան Յակոբին խանութը որ ինծի
ձեռք մը հագուստ կուտայ եւ Տիկինին սորվեցնենք թէ չի ճանչ-
ցած սպասուհիները քովը առնելը ինչպէս կ'ըլլայ եղեր :

(Արաֆսի եւ Սաթ. վազելով ներս կուգան)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն 3.

ՇՈՒՇԱՆ, ԱՐԱՔՍԻ եւ ՍԱԹԵՆԻԿ

Արաֆսի (Շուշանին). — Շուտ ըրէ՛, տեսնենք ինչպէս պիտի
վայլէ հագուստդ :

Սաթ. — Համբերէ քիչ մը :

Շուշ. — Բայց դարձեալ կ'աղաչեմ որ մէկուն բան մը չըսէք .
(Տիկ. Հովսիսիմեին ձայնը կը լսուի դուրսէն) :

Ձայնը . — Արաքսի՛, Սաթենի՛կ :

Արաֆս. — Հոս ենք մօրաքոյր : (Շուշանին) Մի՛ վախճար :

Ձայնը . — Արաքսի՛, Սաթենի՛կ :

Արաֆս. — Հոս ենք մօրաքոյր : (Շուշանին) Գիտե՞ս ես, Սա-
մաթիա խույումճի Ահարոն աղային տունը :

Շուշ. — Այո, երկաթուղիին կայարանին դէմը :

(Ամենքն ալ կ'երթան)

Վերջ Ա. արարուածի

Բ. ԱՐԱՐՈՒԱԾ

(Բեմին վրայ բան մը չմնար)

Ձայն մը (դուրսէն). — Շուշա՛ն, Շուշա՛ն, Շուշա՛ն, (Տիկ. Հռիփս. կուգայ):

Ա. ՏԵՍԱՐԱՆ

Տիկ. Հռ. (կանչելով). — Շուշա՛ն, Շուշա՛ն, — Սա չարածճին կոկորդոս պատռել պիտի տայ — Շուշան — դեռ չեկաւ. շատ անհնազանդ է սա աղջիկը — Շուշան. ա՛լ պիտի ճամբեմ. Շուշա՛ն, Շուշան. ալ ձեռքէն պիտի ազատիմ, ուրիշ միջոց չկայ. Շուշան, աղջիկ, առտուն ժամը մէկին գնաց, հիմայ ութն է դեռ պիտի գա՛յ. սեղանը տակաւին դրուած չէ. Շուշա՛ն. Սամաթիա երթալն այդքան երկա՞ր կը տեւէ. շոգենաւէն երկաթուղի և ճիշտ Ահարոն աղայի տունին առջեւ վար պիտի իջնէ. Շուշան, Շուշան, աղջիկա, ինչո՞ւ չեկաւ արդեօք: (Արաֆս. Եւ Սաքենիկ վազելով ներս կը մտնեն):

Բ. ՏԵՍԱՐԱՆ

Տիկ. Հռիփս. ԱՐԱՐՈՒ ԵՒ ՍԱԹԵՆԻԿ

Արաֆս. — Մօրաքոյր, Մօրաքոյր, եկաւ:

Սաք. — Այո՛, հիմա՛ եկաւ:

Տիկ. Հռ. — Ո՞վ:

Արաֆս. — Ան... , պզտիկը... , Սպասուհին...

Տիկ. Հռ. — Լաւ: Եւ Շուշա՞նը, մէկտեղ չէ՞:

Սաքենիկ. — Շուշա՞նը. (Արաֆսիին ետեւը նայելով) Մենք Շուշանը չի տեսանք:

Տիկ. Հռ. — Ի՛նչպէս, Շուշանը մէկտեղ չէ՞: Այս գարմանալի՛ է. . .

Արաֆս. — Ահաւասիկ. մօրաքոյր, եկաւ:

(Շարունակելի)



ԳՐԱԳԻՏԸ

(Շարունակութիւն 33րդ թիւէն եւ վերջ)

Լալու աստիճան տխուր կը զգայի ինքզինքս, լալու այնպէս, ինչպէս որ ամպերն կուլային իմ եւ աշխարհի վրայ, մինչեւ սրբ-տիս խորը համակուած էի տխրութեամբ. այնչափ ճնշուած էի յողնութեամբ, որ չէի կրնար վերցնել կաւէն բռնուած սրունք-ներս. տուն մտնելու պահուստ եսայ որ բժշկի թրթրակը (cabriolet) գտնուելով դաշտերու միջեւ՝ կը հետեւէր խոտորնակ ճամբու մը:

Այս չարաշուք օրը, մահուան գուշակութեան մը նման, կը թափառէր դաշտին մէջ այն սեւագգեստ եւ ցած կառքը, որ ծածկուած էր բոլորակ ձածկոյթով մը և զոր կը քաշէր թխորակ ձի մը: Կառքը կանգ առաւ անմիջապէս. բժշկի գլուխն երեւցաւ եւ է՝ պուռաց:

Դէպի անոր գացի:

— Կեղծամաշկէ բռնուող մը խնամելու համար կ'ուզէ՞ք օգ-նել, ըսաւ ինձ: Առանձին հմ և անոր կոկորդէն կեղծ թաղանթ-ները հանելու ատեն մէկը պէտք է որ բռնէ զայն:

— Ձեզ հետ կուգամ պատասխանեցի եւ կառքը ելայ:

Հետեւեալը պատմեց ինձ:

Խեղճ մարդոց՝ Մարդինէի ագարակը թափանցած էր այն կատաղի փողացաւը, որ խեղդամահ կ'ընէ ողորմելի արարած-ները, չարթուան սկիզբը մեռած էին հայր ու որդի, իսկ այժմ՝ կ'երթային նաև մայր ու աղջիկ:

«Հիւանդները խնամող դրացուհի մը, յանկարծ ինքզինքը անհանգիստ զգալով, երէկ գիշեր իսկ փախած էր բաց թողնով տանը դուռը եւ իրենց յարգեայ խշտիկներուն վրայ լքելով այն խեղճ հիւանդները, որոնք քսանը եւ չորս ժամէ ի վեր առան-ձին մնալով կը հռչէին, հեղձամահ կը լինէին, կ'ոգեվարէին եւ խմելու ալ ոչինչ ունէին:

«Բժիշկը մաքրելով մօր կոկորդը ջուր խմցուցած էր անոր. իսկ տղան, խելացնորեալ հեղձումի պատճառած հոգեվարքէն եւ ցաւերէն, յարգանկողինի մէջ կը խօթէր իր գլուխը եւ դժգո-հութիւն կը յայտնէր, երբ մէկը կը մօտենար իրեն:

«Բժիշկը վարժուած լինելով այս թշուառներուն տխրագլեցիկ և համակերպող ձայնով մը կը կրկնէր:

— Սակայն եւ այնպէս, հակառակ փափաքներուս չեմ կրնար հիւանդներուս քով անցնել իմ ամբողջ օրերս: Անիծեալ բախտ, միայն ասոնք սիրտը կը նեղեն: Մարդ երբ կը մտածէ, թէ ամ-բողջ քաջն եւ չորս ժամ առանց խմելու կ'ապրին այդ խեղճները, քանի մինչեւ անոնց անկողիններու վրայ կը քշէր անձրեւը: Բոլոր կաքաները ապաստանած էին բուխերիկներու մէջ:»

Ագարակ հասանք վերջապէս: Ձին դրան առջեւը գտնուող խնձորենիի մը ճիւղին կապելէ վերջ ներս մտանք: Սաստիկ գէշ հոտ մը բռնեց կոկորդէնիս, հոտ մը, որ կը յատկանշէր հիւան-

դուրսիւն եւ խոնաւութիւն ու մգլոտութիւն, հիւանդանոցի նըկուղ, ճահճային ցուրտ մը կը տիրէր այդ չարաշուք, անախորժ, անկենդան եւ անկրակ տան մէջ: Ժամացոյցը դադարած էր բանելէ, անձրեւը կը տեղար մեծ բուխերիկի մէջէն եւ թռչունները ցիր ու ցան ըրած էին օճախի մոխիրը: Այնպիսի խռպոտ եւ արագաշունչ փուքի մը աղմուկին կը նմանէր տղուն շնչառութիւնը, որ կը լսուէր մթին անկիւնէ մը:

Մայրը հանգիստ կը թուէր տարածուած լինելով փայտեայ մեծ արկղի մը մէջ. որ իբր անկողին կը ծառայէր գեղացիներուն եւ որ գոցուած էր հին ծածկոյթներով եւ մաշած գորգերով: Գլուխը մեր կողմը դարձուց քիչ մը: Աշտանակ մը ունի՞ք հարցուց անոր բժիշկը:

Վշտահար եւ ցած ձայնով մը պատասխանեց.

— Դարանին մէջ կայ...:

Բժիշկը ճրագն առնելով բնակութեան խորքէն տարաւ փոքրիկ աղջկան անկողինն մօտ:

Կը հեւհեւար նէ, այտերը մսաթափ էին, աչքերը՝ փայլուն, մազերը՝ խառն ի խուռն եւ զարհուրելի: Իւրաքանչիւր շնչառութեան խոր փոսիկներ կը կազմուէին անոր վտիտ եւ երկարեալ վզին շուրջ: Կռնակին վրայ տարածուած էր խեղճ աղջկը: Երկու ձեռքերովը կը սեղմէր զինք ծածկող ցնցոտիները. այնինչ տեսաւ մեզ՝ երեսին վրայ դարձաւ, որպէս զի պահուի յարդ անկողինի մէջ:

Ուսերէն բռնեցի եւ բժիշկն ստիպեց, որ ցոյց տայ կոկորդը, որմէ խլեց սպիտակորակ մեծ թաղանթ մը, որ կաշիի մը նման չոր երեւցաւ ինձ:

Դիւրութեամբ շնչեց իսկոյն եւ քիչ մըն ալ ջուր խմեց. իսկ մայրը արմուկին վրայ կռթնելով կը դիտէր մեզի եւ թոթովեց հետեւեալը...

— Լրացա՞ւ:

— Այո՛, Տիկին.

— Առանձին պիտի թողուք մեզ:

Կատաղի երկիւղ մը կը դողդղացնէր անոր ձայնը, երկիւղ մը՝ առանձնութեան, լքումի, խաւարի եւ այն մահուան, զոր իր մօտը կ'զգար նէ:

— Ո՛չ, քաջասիրտ տիկին. պիտի սպասեմ մինչեւ որ տոբթէօրը հիւանդապահ կին մը ղրկէ քեզ:

Եւ ես դառնալով բժիշկին:

— Մայր Մօտին ղրկեցէք ասոնց, ես պիտի վճարեմ անոր վարձքը:

— Հա՛ւ, իսկոյն կը ղրկեմ:

Ձեռքս սեղմելէ վերջ դուրս ելաւ, իսկ ես սպասեցի անոր թրթրակին, որ կը թաւայէր խոնաւ գետնի վրայէն:

Առանձինն էի երկու մահամերձներու հետ:

Սեւորակ վառարանին առջեւ պառկած էր Բաֆ շունս, որ խորհիլ տուաւ ինձ. թէ քիչ մը կրակ օգտակար պիտի ըլլար մեր բոլորին համար: Ուստի փայտ եւ յարդ փնտռելու համար դուրս ելայ վերստին եւ մեծ բոց մը իսկոյն լուսաւորեց մինչեւ սեն-

եակին խորը գտնուող անկողինն այն փոքրիկ աղջկան, որ կը վերսկսէր իր հեւհեւուքը:

Իսկ ես սրունքներս դէպի յճախը երկարցնելով նստայ:

Անձրեւը կը ծեծէր տպակիները, քամին կը ցնցէր տանիքը, երկու կիներու շշական, խիստ եւ կարճ շնչառութիւնը կը լսէի, նաև շանս որ պայծառ կրակետդին առջեւը բոլորած կը մրմնջէր, չունջը կը հասնէր տկանջիս:

Կեանք, կեանք, ոսկայն ի՞նչ է այս: Պիտի մեռնէի՞ն այս երկու տարաբախտները. որոնք քնացած էին միշտ յարդի վրայ, կերած էին սև հաց, անասուններու նման աշխատած էին եւ... կրած էին աշխարհի բոլոր թշուառութիւնները: Ի՞նչ էին բրած. հայրը մեռած էր, նոյնպէս եւ որդին: Սակայն եւ այնպէս բարի պարգասէր եւ պատուաւոր անձինք նկատուած էին այս չքաւորները, որոնք կը սիրուէին ու կը յարգուէին բոլորէն:

Շանս քնանալի ու կապոցներու ծխալը կը գիտէի, սակայն զգայական եւ ամօթապարտ հեշտութիւն մը զգացի իսկոյն բաղդատելով ճակատագիրս այս տաժանապարտներուն սև բախտին հետ:

Փոքրիկ աղջիկն սկսաւ հռնչել եւ յանկարծ անհանդուրժելի թուեցաւ ինձ այս իռպտոտ շնչումը, որ կը գալարէր աղիքներս սրածայր գամի մը նման իւրաքանչիւր հարուածին մխուելով սրտիս մէջ:

Մօտն երթալով րսի անոր:

— Կ'ուզե՞ս խմել:

Հաւանութեան նշան տալու համար գլուխը շարժեց. քիչ մը ջուր լեցուցի անոր բերնին մէջ, սակայն վար չգնաց երբեք:

Լսելի հանգիստ էր մայրը, որ դարձեւ էր մեր կողմը իր զաւակը դիտելու համար: Եւ ահա՛, երկիւղի մը հպումը զգացի յանկարծ: չարաշուք երկիւղ մը, որ աներեւոյթ հրէշի մը շփումին նման անցաւ մորթիս վրայէն: Չէ՛ դիտեր, թէ ո՞ւր կը գտնուէին, Կ'երազէի՞ միթէ: Ինչպիսի բանդագողչանք մը գրաւած էր զիս: Միթէ ճշմարիտ է, թէ այսպիսի բաներ կը պատահին եւ մարդ ա՛յս կերպով կը մեռնի: Եւ ես, կծկուած միթին անկիւն մը կը դիտէի խրճիթի բոլոր նաեմաստուներ խորշերը, իբր թէ կ'սպասէի տեսնել զարհուրելի, անանուանելի եւ զըզուելի կերպարանք մը, որ դարձամուտ լինելով մարդոց կեանքին կը կրծէ, կը ճնշէ, խեղդամահ կ'ընէ եւ կը սպաննէ զանոնք, եւ որ կը սիրէ կարմրագոյն արիւնը, ջերմէն լուսաւորուած աչքերը, խորշոմներն ու թառամութիւնները և սպիտակ մազերն ու քայքայումները:

Կրակը կը մարէր, սակայն որչափ որ փայտ կը նետէի կրակեաղի մէջ եւ կը տաքցնէի ուսերս, նոյնչափ ալ համարիս սարսուռ կ'զգայի երակներուս մէջ:

Գէթ կը փափաքէի մեռնիլ այնպիսի լաւ սենեակի մը մէջ, ուր բժիշկներ խռնուած պիտի լինէին չուրջս եւ դեղերն ալ պատրաստ սեղանին վրայ:

Իսկ այս կիներն քսան եւ չորս ժամ շարունակ միայնակ կը մնային այս անկրակ խրճիթին մէջ եւ յարդին վրայ հռնչելով...:

Ձիու մը թրօթը և կառքի մը թաւալումը լսեցի յանկարծ, հիւանդապահ կիներ առանց շուարելու ի տես այս թշուառութեան ներս մտաւ անվրդով, գոհ գործ մը գտած ըլլալուն համար:

Քանի մը արծաթ դրամ՝ ձգեցի անոր եւ հազիւ թէ շանս հետ միասին՝ Լեզատ զգալով ինքզինքս չարագործի մը նման կը վազէի անձրեւի տակէն եւ կը կարծէի թէ կը լսէի դեռ ևս երկու կոկորդներու սուլումները, կը վազէի դէպի տաք բնակարանս, որ ինձ կը սպասէին շառաներս սլաւարատելով ինձ համար համեղ ճաշ մը:

Սակայն այս բանը պիտի չմոռնամ երբեք, նմանապէս ուրիշ բազմաթիւ բաներ, որոնք զգուանք կ'ազդեն ինձ այս երկրի մասին:

Թրգմ. Յ. Գ. ԱՇԸԳԵԱՆ

ԿԻ ՏԸ ՄՕՐԱՍԱՆ

ՍԱՌՆԱՐԱՆԻՆ ԳԱՂՏՆԻՔԸ

(Շար. 33րդ թիւէն)

Խորհրդակցութիւնը սկսած էր. կարծիքները կը տարբերէին: Նախ խօսեցաւ Իւլրիխի հօրենական մէկ ազգականը, որ ընտանիքին անունը փրկելու համար, բաւական ճարտարութեամբ պաշտպանեց ամբաստանեալը պնդելով թէ կատարուած խուզարկութիւններէն և ոչ մին դրական ապացոյց մը կը հայթայթէր, յիշելով անոր անցեալը՝ ցցուց թէ երեսուն տարեկան այդ երիտասարդը՝ ամբողջ կեանքին մէջ այսպանելի արարք մը չէր ունեցած բնաւ:

Խօսքը առաւ դատաւորը, որ ամէն պատասխանատուութիւն իր վրայէ հեռացնելու համար, խնդիրը Եղեռնադատ ատեանին յանձնել ուզեց:

Առաջնորդներու անդամակցութեան պետը բողոքեց այս որոշումին դէմ. Իւլրիխ իրենցմէ էր և ինչ որ ալ ըլլար՝ անոր ամօթը ամբողջ ընկերակցութեան վրայ կ'իյնար. միւս կողմէ ալ ոճիր մը գործուած ըլլալը կարելի չէր դրապէս հաստատել: Սակայն ամէն պարագայի մէջ, եթէ ոճիր ալ չկար, գէթ անանկ սխալ մը գործուած էր առաջնորդին կողմէ որու դէմ իրենց ընկերակցութիւնը որոշ պատիժը սահմանած է:

Վիճաբանութիւնը փակուելէ ետքը, քուէարկութեան ձեռնարկեցին: Երկուքի դէմ տասներութը ձայնով Իւլրիխ դատապարտուեցաւ ընկերակցութենէն վտարուելու և այլ եւս օտարականներ չկարենալ առաջնորդելու:

Թակմար ներս բերուելով, բոլորովին ուժաթափ՝ մտիկ ըրաւ դատապարտութիւնը և պարզօրէն ըսաւ.

— Ե՛ս անմեղ եմ:

Վրայէն գտնուած աղտոտ թերթերով ու կաշեպատ թղթապանակի տեղ ծառայող տետրակը իրեն տուին, զոր հաւաքով մը գրպանը դրաւ, և երկու արցունքի կաթիլներ այտերէն վար գլորեցան: Նախկին ընկերները, տրտում ու դեք, կարգաւ դուրս

եւան առանց իրեն նայելու, եւ երբ դրան սեմին վրայ հասան շրջապատուելով իրենց ազգակիցներէն ու բարեկամներէն, ցած ձայնով խօսակցելով՝ գացին անհետացան:

Մուծը կոխելէն հտքը, երբ փողոցները ամայացան, Իւլրիի Թակմար դուրս ելաւ քաղաքապետարանէն եւ գողի քայլերով Թաղերէն անցնելով սառնապատ ճամբաներու մէջ մտաւ, Կէս ժամ հտքը խրճիթի մը առջեւ կը հասնէր. դուռը բռնալու համար պարզ փականք մը դարձուց:

Ժայռի կտորի մը վրայ կին մը նստած էր. շատ մաքուր հագուած, արմուկները ծունգերուն կրթնցուցած, մտածկոտ՝ սեւ ու խոպոպ մազերը կը քերէր: Չայն առնելով գլուխը վեր առաւ:

— Ի՞նչ ըրիր, հարցուց նէ, կարմիր շրթերն ու խոշոր աչքերը բանալով:

— Եղա՛ւ լմնցաւ, պատասխանեց Թակմար, ու սկսաւ լալ:

Կինը անոր վրայ սեւեռեց հարցական ականարիւր, գուշակելու համար ինչ որ ան չէր ուզէր ըսել. ու սիրտը կակուղցաւ:

— Հո՛ս եղուր Մարիա, պաղատեցաւ Իւլրիի, նստարանի մը վրայ իյնալով:

Եւ քով քովի նստած սկսաւ պատմել եղածը: Երբեմն չունչը կտրելով եւ համբոյրներու սպեղանիին տակ միայն վերստին քաջութիւն ստանալով:

Երկար ժամեր դառն ու խանդալատուն սրտերով քով քովի մնացին: Եւ երբ քնացան, արշալոյսը ծագած էր:

* * *

Երեսուն ամսի չափ Իւլրիի ու Մարիա՝ զոհին 12 ոսկիներովը ապրեցան, զոր իրենց ձեռքէն չէին առած անիծեալ գրամ մը ըլլալուն համար: Կինը կ'երթար դրամները աւրել տալու եւ հարկ եղած պաշարը կը գնէր եօթը ութը ժամուան ճամբայ հեռու գիւղերէ: Անկէ վերջը նախկին աստճէրդը մօտակայ գետնին վրայ հօտ մը պահելով կ'ապրուէր: Առտուընէ մինչեւ իրիկուն այդ տեղուանքը կը մնար, անկէ հեռանալու վախճալով՝ չհանդիպելու համար իր նմաններուն, որովհետեւ իր առաջուան բարեկամները ճամբանին կը չեղէին իրեն քովէն չանցնելու համար: Դատաւորն իսկ, երբ իրեն հանդիպէր, կը մոռնար պատասխանել ընդունած յարգական ողջոյնին:

* * *

Արկածը պատահելէն ի վեր տասնեւհինգ տարիներ անցած էին: Դանի մը սարսափելի ձմեռներ իրարու յաջորդելէ վերջը տարօրինակ լուր մը տարածուեցաւ շրջակայքը. Ստորին սառնարանը կը փախէ եւ շիտակ Թակմարի բնակարանին վրայ կը յառաջանար: Երբ ամէն մարդ վերահասու եղաւ այս դէպքին, կրօնամոլ այդ ժողովուրդը (որ բնաւ տեղեակ չէր գիտութեան բացատրութիւններուն) Աստուծոյ մատը տեսաւ որ կը պատէր մարդասպանը:

Ամէնէն առաջ Իւլրիի նշմարեց այդ վտանգը: Տեսաւ թուփ մը որ սառեւրուն ճնշումին տակ կը կքէր. սպիտակ բուրգեր կը ծածկէին այն տեղերը ուր կանանչ ըլլալը գիտեր ինք:

Յաճախ, գիշերային ժամերուն մէջ դիմադրող կոճղ մը կը խորտակուէր սարսափելի ճարճատիւններով եւ եթէ ինք չիմանար այդ աղմուկը, Մարիա կ'արթնցնէր գիրքը, մասնակից ընելու զգացած վախին:

Կամաց կամաց այս ոչ-հեղուկ ու դանդաղ հեղեղը ծածկեց Իւրիխի վտիտ արօտավայրը: Թափմար ծախեց իր հօտը: Երբ ապրուստի բոլոր միջոցները սպառեցան, Իւրիխ Ալպեան փող մը գնեց ու սկսաւ մուրալ: Սառնարանը միշտ կը յառաջանար եւ կը ծածկէր այն ճամբան ուրկէ զբօսաշրջիկները կ'անցնէին լեռան վրայ բարձրանալու: Առաջնորդները ստիպուեցան տարբեր ճամբայ մը գտնել եւ անկէ ետքը մարդ չանցաւ Իւրիխի խրճիթին առջեւէն:

Բոլորովին մոռցուած էր ան:

* * *

1750ի գարունին, սառի կտորները տնակին դուռը հասած էին: Այդ միջոցին Մարիա մեռաւ կտրճատեւ հիւանդութենէ մը՝ որ դողդղումներով սկսաւ ու բանդագուշանքով աւարտեցաւ:

Եռեսուն և վեց ժամեր, թշուառ ամուսինը, վրան ծանրացող անհուն ցաւին տակ ընկճուած, տեղէն չկրցաւ շարժիլ իսկ: Յետոյ, լուսնի լոյսէն օգտուելով գերեզմանատուն տարաւ սիրելիին մարմինը եւ չըջափակէն դուրս, հարսնուկներով ծածկուած հողին տակ թաղեց զայն:

Շրջականերէն մարդ հոգ չըրաւ այս մահը, զոր գուցէ ոչ ոք իմացեր էր:

Ի վերջոյ, անհրաժեշտ պէտքերը հոգալու համար, զոր Մարիա չէր կրնար այլ ևս հայթայթել, Իւրիխ մարդերու մօտեցաւ:

Գիւղը մեծցած էր. նոր տուններ շինուած, մաքուր ճամբաներ բացուած էին: Երբ թշուառ աքորականը հոն մտաւ, մէկը չկըրցաւ ճանչնալ զինքը այնքան ծերացեր էր: Արդէն երկու նոր սերունդներ մեռած էին, եւ նոր կազմուած ընկերութիւնը շատ տարտամ կերպով իմացած էր անցեալին այդ տխուր պատմութիւնը, որու ականատեսները կը հանգչէին հողին տակ: Անգամ մը միայն խօսք բացուեցաւ ատոր վրայ, եւ երբ իրեն հարցում մը ըրին, այնպէս անկապակից խօսքեր թոթովեց որ զառամած ծերուկի մը տեղ դրին զինքը: Այն անկէ ետքը կրնար առանց վախի երեւալ մարդոց, եւ կամաց կամաց ընկերութեան մէջ խառնուելով ու մտիկ ընելով իմացաւ թէ մէկ հոգի մը միայն ողջ կը մնար իր տոհմէն՝ զինքը դատապարտող դատաւորն էր ան որ գրեթէ հարիւրամեայ մը եղած, սենեակէն դուրս չէր ելլեր:

ԱՊՈՒՄԱՄԱՆՆԵՐ

Վախանս քաղաքի խեղճուկ փողոցներէն մէկուն մէջ կ'ապրէր Անթուան անուն աղքատիկ գործաւոր մը: Բազմաթիւ ընտանիք մը գլուխը ժողւած, հազիւ բաւելով իրեններուն ապրուստին, թշուառը սոսկումով կը մտածէր այն օրուան վրայ ուր անգործ պիտի մնար: Գէշ օրերուն վախը կ'ազդէր իրեն տկար ուղեղին

վրայ նոյն իսկ ամէնէն շատ գործ ունեցած օրը եւ զայն կախե-
րէս ու բիրտ մէկը դարձուցած էր :

— Ի՞նչ վիճակ պիտի ունենամ, եթէ գործ չգտնեմ, կը մտա-
ծէր ամէն վայրկեան. զաւակներս անօթութենէ պիտի մեռ-
նին...

Օր մը, երբ երեսը կախ՝ գրեթէ դժկամակութեամբ գործին
կ'աշխատէր, գիւղին բժիշկը՝ որ դրամին ու խելքին հետ մէկտեղ
բարի սիրտ մըն ալ ունէր, քովը եկաւ ու հարցուց :

— Ի՞նչ ունիս բարեկամս, վշտացած կ'երեւիս :

Անթուան պատմեց սիրտը ճնշող մտածումը, ու սկսաւ հեծ-
կըլտալ :

— Երբ յուսահատութիւնը չսպաննես, ըսաւ բժիշկը, յուսա-
հատութիւնը քեզ կ'սպաննէ : Հետս եկէ՛ք, ձեզի բժշկեմ ցա-
ւերնուդ :

Անթուան շուտ մը գործը ձգեց ու տոբթորին քովը կառքը
նստելով՝ անոր տունը դնաց : Երբ իր սենեակը ելան, բժիշկը
տուփ մը հանեց դարակէ մը և Անթուանին տալով ըսաւ .

— Ասիկա ադամանդ մըն է. հարիւր ոսկիի չափ կ'արժէ :
Հայրս ձեզի պէս աղքատիկ գործաւոր մը՝ օրական 10—20 բարս
մէկդի դնելով այս գումարը հաւաքած է : Երբոր գործի սկսայ
այս ադամանդէն զատ ուրիշ բան մը չունէի. քանի՛ քանի՛ ան-
գամներ վաղուան հացիս մտածումը՝ ինծի գետին քովը քեց,
բայց մտածելով որ կրնայի միշտ ադամանդս ծախելով նեղ օրերս
անցընել, միշտ նոր ոյժ մը կ'զգայի : Իմ յաջողութեանս գաղտ-
նիքը այս ադամանդն է. հիմա ա՛լ պէտք չունիմ անոր. կրնամ
քեզի տալ, բայց կը խնդրեմ որ ամէնէն նեղ օրերուդ միայն ծա-
խես այս ադամանդը, որովհետեւ կրնայ ըլլալ որ դուն ալ ուրիշ
մէկուն տաս :

Անթուան շնորհակալ եղաւ ու տուն դարձաւ : Կնոջը հետ
հետ խորհրդակցելէ ետքը որոշեցին որ ադամանդը բաւկին մէկ
անկիւնը թաղեն :

Յաջորդ օրը երբ գործի գնաց բոլորովին փոխուած էր. աշ-
խատած ժամանակը կ'երգէր. կատակներ կ'ընէր : Գործատէրը
զարմացած՝ հարցուց թէ ի՞նչ եղեր է այդ օրը :

— Երբ յուսահատութիւնը չսպաննես, պատասխանեց Ան-
թուան, ան քեզ կ'սպաննէ :

Անթուան, ա՛լ ապագային վրայ մտատունջ չըլլալով, ա՛լ ա-
ւելի փարեցաւ իր գործին, բոլոր ոյժը կեդրոնացուց անոր վրայ
ու քիչ ատենէն կատարեալ գործաւոր մը եղաւ. ամէնքը զինքը
կը փնտռէին գործ մը յանձնելու համար : Շատ չանցած սկսաւ իր
հաշուոյն աշխատիլ. նոր ձեռնարկներու մէջ մտնել : Ըրած շա-
հերը՝ ընտանիքին ծախքերուն բաւելէ զատ կ'աւելնային ալ :
Երբեմն, այր ու կին, իրարու հետ կատակելով կ'ըսէին. «Ի՞նչ
կ'ընես, ադամանդը ծախե՞նք» եւ կը խնդային : Քանի մը տա-
րիէն բաւական դրամ մէկդի դրած էին՝ պզտիկ արտ մը գնելու
համար : Տղաքներն ալ արդէն մեծցած էին : Զուարթ ընտանիքի
մը համերաշխ աշխատութիւնը ի՞նչ հրաշքներ չգործեր : Անթուան
դեռ յիսուն տարեկան չեղած, գիւղին ամէնէն հարուստն էր :

Պզտիկ դաշտը շատոնց ընդարձակ ագարակի մը վերածած էր :

... Զմեռ գիշեր մը՝ երբ Անթուան ընտանիքը գլուխը ժողուած , վառարանին շուրջը կը տաքնային , դուռը զարնուեցաւ : Աղքատ մըն էր : Նախկին գործաւորը սիրալիր ընդունելութիւն մը ըրաւ խեղճ հիւրին և աղէկ մը զայն կազդուրել տալէն ետքը պատմութիւնը լսել ուզեց : Գրեթէ իր նախկին կեանքն էր որ այդ թշուառը կը քաշքշէր տաժանագին :

Անթուան պատմեց իր անցեալը , յիշեց ադամանդը և նոյն իսկ կնոջը հետ ակնարկ մի փոխանակելէ ետքը գնաց թաղած տեղէն բերաւ :

— Ահա՛ , ըսաւ աղքատին , իմ՝ յաջողութեանս թալիսման , քեզի կուտամ անիկա , ա՛լ պէտք չունիմ անոր :

Մարդը քննեց ադամանդը և գլուխը օրօրելով ըսաւ .

— Մե՛ղք ասիկա կեղծ է , իրաւ ադամանդ չէ :

— Անկարելի բա՛ն , գոչեցին երկու ամուսինները , աչքերնին չփելով :

— Տուփին մէջ գրուած բան մը կայ ,

եւ կարդացին .

«Աւելի վախը քան թէ բուն իսկ պէտքն է որ մեզի թշուառ կ'ընեն : Անվրդով բռնած ճամբանիդ շարունակեցէք և եթէ նպատակնիդ բարի է , վստահ եղէք որ պիտի հասնիք :

— Շնորհակալ եմ , ըսաւ մուրացիկը , այս խրատն ալ աղաւմանդի մը չափ թանկագին է՝ զայն գործածել գիտցողին համար :

Է. Լ.




ՄԱԿԱՅ ՈՅԾ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Շատ մը կերպերով կարելի է ըսել , « Այդ տեղէն է ելիր որ ե՛ս գամ » . եւ նոյն իսկ մարդիկ այդ արհեստին մէջ վարպետ եղած են . սակայն կենդանիներուն մէջ ալ կան անանկներ որ մարդուն քար կը հանեն , եւ անանկ վայելչութեամբ մը կը գործեն որ հիանալի է :


Տեսակ մը խեցեպատեան կայ , որու ձգնաւոր անունը տալ խիստ յարմար է : Այս նախանձոտ կենդանին երբ տեսնէ ուրիշ խեցի՝մը որու պատեանը շատ հաճելի թուի իրեն , կամաց մը կ'երթայ՝ մէջի ապրող կենդանին կ'ուտէ ու ինք անոր տեղը կ'անցնի ու իր ընթացիկ գործերուն կը նայի :

Մեր երկրորդ պատկերին մակարոյժ կենդանին ալ ուրիշ տեսակ է . « Թիթեռնի՞կ մը » , պիտի հարցնէք . « Ո՛չ » . Թիթեռնիկը հոս դրուած է թրթուրին համար և թրթուրը դրինք՝ իր վրայ ապրող մակարոյժ սունկը ցուցնելու համար : Այս սունկը որ լատիներէն անուն մը ունի , կ'ապրի թրթուրներու մարմինին



վրայ, անկէ կը ծծէ իր հիւթը, ինչպէս ո՛ր եւ է ծառ հողէն
կ'առնէ իր սնունդը:

Չարմանալի է որ թրթուրին շնչառութեան ու մարսողութեան
գործարանները անվնաս կը մնան որով խեղճ կենդանին կրնայ
ամբողջ կեանքին տեւողութիւնը անցնել՝ այս մշտնջենաւոր տան-
ջանքը կրելով իր վրայ:



ԿԱՐԵՒՈՐ ԶԵԿՈՅՑ

Հանրագիտակի Մեծ. Բաժանորդներէ և Գործակալներէ կը խնդրենք որ բաժանորդագիրներէ և յանձնարարութիւններէ մընացած պարտքերնին վճարել բարեհաճին այլևս, որովհետեւ տարւոյն Ութ ամիսը լրանալէն վերջը՝ դեռ չատ տեղեր սոյնօրինակ հաշիւներ անվճար կը մնան:

Բ Ա Յ Ա Ռ Ի Կ Թ Ի Ի

Գալ չարթու «Հանրագիտակ»ի բացառիկ թիւ մը պիտի հրատարակենք, որու բովանդակութիւնը չենք ուզեր հիմակոնընէ ըսել՝ մեր ընթերցողներուն վայելել տալու համար անակնկալի մը հաճոյքը, որովհետեւ, այդ թերթը իրաւ բացառիկ թերթ մը պիտի ըլլայ ծաւալովը (առնուազն 32 էջ) եւ մանաւանդ իր պարունակութիւնովը:

Իբր մեր կողմէ պարգեւ, թերթին բաժանորդները պիտի ընդունին զայն առանց ո՛ր և է վճարումի, իսկ ձեռքէ գնողները պարտին վճարել 40 փարա:

ԳՐԻԳՈՐ ԷՖ. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ Հետեւեալ աշխատասիրութիւններու կեդրոնատեղին է Պէրպէրեան--Տէմիրեան Ընկ. գրատունը՝ Պապ Ալի ճատտէսի թիւ 38, Պէրպէրեան տպարան:

1. Պատկերազարդ բնական, քաղաքական եւ տնտեսական Աշխարհագրութիւն՝ Տարր. դասընթացքի կարգաց համար 2,50
 2. Պատկերազարդ բնակ. քաղաքակ. եւ տնտես. Աշխարհագրութիւն՝ Միջին դասընթացքի կարգաց համար 4
 3. Պատկերազարդ բնակ. քաղաք. եւ տնտես. Աշխարհագրութիւն, Բարձրագոյն դասընթացքի կարգաց համար 6
- Վճարմունք կանխիկ, մեծաքանակ գնողաց աւելի զեղչ:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Հիւսէյնիկ. — Յ. էֆ. Յ. — Շնորհակալ ենք ձեր 6 Օգոստ. թուակիրէն. Նոր բաժանորդին թերթերը 1—34 զատ ծրարով կը ղրկուի ձեր հասցէին: — Ե. էֆ. Տ. ի նամակը նոյնպէս «Ալմիրայի Հովիտը» չենք ստացած:

Երզնկա. — Պարոյր ԷՖ. Ա. — Անցեալ տարուան չորս բաժնեգիրները ղրկելու համար ինք ամսուան մէջ ղրկած վեց նամակներնէդ յետոյ դեռ սպասե՞նք. կը խնդրենք այս կատակերգութիւնը վերջացնել բարեհաճէիք:

Քէօթահեա, — Ս. էֆ. Մ. — Ստացանք օգոստ 16ի նամակնիդ. լաւ մը քննելէ յետոյ զատ նամակով կը պատասխանենք:

Տիարպէքիր, — Յ. էֆ. Տ. — Ստացանք ձեր Օգոստ 5 թուակիր նամակն եւ ղրոյմաթուղթերն: Փութով կը ղրկուին յանձնարարութիւննիդ:

Նիկոմիդիա. — Յ. էֆ. Ղ. — Եթէ կարելի ըլլար, արդէն ղրկած կ'ըլլայինք. Աւելցած 20 ղահեկանը կրնաք մեր Մեծ. Գործակալէն ստանալ:

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ-ԱՐՏՕՆԱՏԵՐ

ՏՊԱԳՐԻԶ-ՀՐԱՏԱՐԱԿԻԶ

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՆՇԱՆ և ՊԷՐՊԷՐՍԱՆ

Կ. Պոլիս, Պապը Ալի ճատտէսի, Թիւ 38, Մանգուժի տպարանին կից

ՆՈՐ ԳՐԱՏՈՒՆ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ ԵՒ ԿԱՐԱՊԵՏ Ս. ՏԷՍԻՐԵԱՆ



Նշան Կ. Պերպերեան Տպարանը իր Գրատան գործառնութիւններուն ընդարձակութեամբ յարմար դատեց՝ ընկերակցութեամբ Կ. Ս. Տէմիրեան Էֆ. Ի հիմնել նոր Գրավաճառանոց մը որ պիտի գրադի հետագայ գործառնութիւններով։

Կը հայթայիէ դպրոցական դասագրքեր, պատի քարտէսներ, տետրակներ, թուղթ, գրիչ, եւայլն. ամէն տեսակ դասական պիտոյք, թէ մեծաքանակ և թէ փոքրաքանակ։

Հատով կամ մեծաքանակ կը ղրկէ ամէն տեսակ գիրքեր, վէպ, գիտական հրատարակութիւններ, թատերգութիւն, եւայլն, Թրքերէն, Հայերէն, Ֆրանսերէն, Անգլիերէն ու Գերմաներէն լեզուով։


Ամէն լեզուով տեղական թէ օտար թերթերու, հանդէսներու, պարբերականներու բաժանորդ կ'արձանագրէ թէ Պոլսոյ և թէ Գաւառի համար։


Գաւառէն եղած յանձնարարութիւններու համար միւս գրավաճառներու ըրած զեղչէն աւելի զեղչ կուտայ և վճարումներու մասին ամենամեծ դիւրութիւն կ'ընծայէ։

Գրատանս կողմէ կը հրատարակուին շահեկան հեղինակութիւններ եւ դասագիրքեր՝ ընկերովի եւ կամ գոհացուցիչ շահաբաժին հանելով հեղինակին։

Գաւառ. վարժարանաց համար կը ղրկուին խղճամիտ պաշտօնեաներ, ուսուցիչ թէ ուսուցչուհի, ընտրանօք և պահանջմանց համաձայն։

Ներկայ դպրոցական շրջանի առթիւ ամէնէն յանձնարարելի գրքերու մէկ ցանկը կը դնենք զոր կրնանք հայթայթել Պատ. Հոգաբարձութիւններու և Տեսուչներու՝ ամենամեծ դիւրութիւններ տալով թէ զեղչի, թէ վճարումի և թէ ուրիշ պարագաներու համար։



ՀԱՅ ԼՆՁՈՒ

Մանկավարժ. Նոր Քերական (Ի մտոյ Հրատ.)	
Քերական Հարպիկ (Վ. Մարգարեան)	փր. 10
Երկրորդ Գիրք Մանկանց	» 1 ¹ / ₂
Երրորդ » » »	2
Մարգարիտներ	» 1
Գեղեցիկ Զբոսարան Ա.	» 2 ¹ / ₂
» » Բ.	» 3
Դպրոցի Գիրք (Զ. Թորոսեան) Ա.	3
» » » Բ.	4
Ծաղկափաղ Մանկական Դասերու, Հայերէն	
Ընթերցարան (Կ. Տէմիրեան) Տարրկ.	4
Ծաղկափաղ Տիպար Դասերու (Տէմիրեան) Միջ.	4
Ոսկեմատենիկ (Վ. Մարգարեան)	4
Սիրուն Զբոսարան	» 2
Գոհարմատենիկ	» 5
Հատընտիր Հաւաքածոյ, Ա. (Ս. Գաբամաճեան)	5
» » Բ.	» 7 ¹ / ₂
Հանդիսարան (Ս. Դաւթեան)	6
Մայրենի Լեզու (Տէր Ղեւոնդեան) Ա.	3
» » » Բ.	5
» » » Գ.	5
Մանկական Պարտէզ, Պալապանեան	2
Մանկավարժ. Քերականութիւն (Վ. Մարգ.) Ա.	1 ¹ / ₂
» » Բ.	2 ¹ / ₂
» » Գ.	4
Գործն. Ընթ. Շարադրութեան (Ս. Դաւթեան)	3
Ընթացք Շարադրութեան (Ն. Թորոսեան)	4

ՕՍՄ. ԼՆՁՈՒ

Էլիֆպա Օսմ. (Մ. Աբիկեան) Պատկերազարդ.	1
Ընթերցարան Օսմ. Լեզուի (Մ. Աբիկեան)	1 ¹ / ₂
» և Թրգմ. (Պ. Կարապետեան) Ա.	1 ¹ / ₂
» » » Բ.	2
Առաջնորդ Պարսկերէնի (Մ. Աբիկեան)	3
Ճաշակ Օսմ. Գրականութեան (Մ. Աբիկեան)	4

ՖԻՆԱՆՍԵՐԷՆ ԼԵՋՈՒ

Ալֆապէ Թրանսերէն	(Կ. Տէմիրեան)	2
»	» (Բ. Պօղաճեան)	1 ¹ / ₂
»	» (Քօնդ Պէյ)	1 ¹ / ₂
»	» (Օր. Հալէպլեան)	2
»	» (Յ. Թ. Հինգլեան)	3
Մենտոր Մանկանց, Բ. գիրք Թրանս(Տէմիրեան)		4
Առաջնորդ	» Գ. » » »	6
Հիմնական նոր եղանակ (Յ. Թ. Հինգլեան)	Ա.	5
»	» » » » Բ.	6
Առաջին Գիրք Յու. Ի Հայ Թրգմ. (Ռ. Պէրպլեան)		5
Դասագիրք նոր Յու. Լեզուի (Յ. Թ. Հինգլեան)		5

ԴԻՏՈՒԹԻՒՆՔ

Իրագիտութ. գործ. և արհեստ. տրր. (Կ. Տէմ.)		3
»	» Միջին Ա. »	4
»	» » Բ. »	5
» (Յ. Փալազեան) տրրկ.		3
» (Յ. Վ. Մարգարեան) Տրրկ.		3
» (Ե. Թէյեան) Հմու.		3
»	» Ընդրձկ.	6
» Աղապալեան		5
Բնապտմ. և Բնագիտ. Բարձր. (Կ. Տէմիրեան)		7
»	» (Ե. Թէյեան) Տրր. Բ.	5
»	» » Միջին Ա.	6
»	» » » Բ.	5
»	» » Բարձր.	12 ¹ / ₂

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ.

Թուաբանութիւն (Ե. Գարթալեան)		3
» (Տ. Պօղաճեան)		5
» (Ա. Պօյաճեան) Տրրկ.	4	
Բ. 3, Գ. 5 ¹ / ₂ , Դ. 4. Ե. 7, 2.		7
Բ. տարւոյ Բանալին		3
Թուաբանութիւն (Յ. Գ. Փալազեան) Ա.—Դ		4
» Բարձրագոյն Ե. 2.		8
» Առեւտրական (Հ. Խանճեան)		10
» Գ. Գալաֆեան Ա. 4 ¹ / ₂ , Բ.		4 ¹ / ₂
» » Միջին		6 ¹ / ₂
» » Բարձրագ.		12



»	Մանկավարժական(Վ. Մարգ.)	3
»	Պապիկեան	7 $\frac{1}{2}$
»	» Ընդարձակ	20
Տօմարակալութիւն	(Յ. Փալազաշեան)	6
»	(Ն. Տիւղէնճեան)	23

ԿՐԹՆ

Ծաղկաքաղ Բրիտտ. Վրդպտ. (Ա. Մանուկեան)	4
Համառօտ Կրօնագիտութիւն (Հարէլեան)	3
Հին Ուխտի (Սահակեանց)	4
Նոր » »	4

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ընդհ. Պատմութիւն (Բիւրքճեան)	5
» » (Խաչիկեան)	5
Ընդ. Պատմ. (Մ. Ծալեան) Ա. մաս (Արեւել. հին ազգեր)	3
Նոյն Բ. մաս (Հին Յունաստան և Միջին Դար)	5
Նոյն Գ. մաս (Արդի և Ժամանակակից)	5
Ընդ. Պատմ. (Մ. Մամուրեան) Արեւել. Հին ժողով.	5
Նոյն, Կարգեղոնացւոց, Յունաց և Հռովմ.	7 $\frac{1}{2}$
Նոյն. Միջին Դար	15
Օսմ. Պատմ. Աշճեան	4
» » (Գ. Մարգարեան)	2 $\frac{1}{3}$

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Աշխրհ. Համառօտ (Գ. Մարգարեան)	3
» Պատկերազարդ »	6
» (Պօղանճեան)	4
» (Ե. Թէյեան)	3
» (Հ. Խանճեան)	5
» Օսմ. Կայսրութեան (Դ. Խաչկոնց)	3
» Համառօտ (Փալազաշեան) Ա. մաս	2
» » Բ. մաս	2
» Ընդարձակ »	5
» Համառօտ (Ա. Հայրիկեան)	3 $\frac{1}{2}$

ՋԵՂԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Ջեւագիտութիւն (Գ. Մալաթեան)	5
» (Մ. Գալէնտէր)	10



ԱՓՕՍԹՕԼԻՔ ԻՆԹԻԹԻԻԹ Ի ԳՕՆԻԱ

(ՃԷՆԱՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ)

Վարժարանս կ'աւանդէ՝ մեր երկրին մէջ գտնուող (մերիկեան միւս գոլէճներուն յար և նման ծրագրով մը՝ Օսմ., Հայ., Անգղ., Ֆրանս., եւ Յուն. (Յունաց համար) լեզուներ, նաեւ Բնական, Բնապատմական, Ուսողական, Փիլիսոփայական եւն. գիտութիւններ, իսկ իրրեւ արուեստ կ'ստուցանէ կահագործութիւն, յուանկարչութիւն և ջութակահարութիւն։ Բաց աստի յառաջիկայ տարեշրջանէն սկսեալ պիտի հաստատէ երեք տարուան

Վաճառականական Դասընթացք

մը՝ ուր մասնաւոր ինամքով պիտի դասախօսուին գործնականապէս Առեւտրական Աշխարհ., Թուաբ., Տոմարակալութ., Օրէնսգիտութիւն, Վաճառականական և Սեղանաւորական գործողութիւններ, Պաշտօնական և ոչ-պաշտօնական ամէն տեսակ գրութիւններ՝ Օսմ. Հայ., և Ֆրանսերէն լեզուներով, եւն. եւն., եւ սոյն ճիւղին աշակերտները ստիպեալ չպիտի ըլլան գոլէճական միւս դասերուն հետեւելու։ Տարակոյս չկայ թէ այս նորութիւնը ոչ կը պակսէր մեր մէջ՝ մեծ օգուտներ պիտի ընծայէ հասարակութեան։ Գիշերօթիկներու դպրոցական տարեթօշակն է միայն 10 Օսմ. ոսկի, նոր տարեշրջանը պիտի սկսի Սեպտ. 11/24 ին։ Աւելի մանրամասն տեղեկութեան համար դիմել առ Տնօրէնն Վեր. Տքդ. Ա. Յ. Հայկապեան. ի Գոնիա։

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Տ Պ Ա Ր Ա Ն Ը

Փոխադրուած ըլլալով՝

ՊՈԼԻՍ, ՊՍՊԸ ԱԼԻ ՃԱՅՏԵՍԻ, ԹԻԻ ՅՏ. ԻԴՏԱՄ ԼԵԱԴՐԻ ԴԷՄ

Ստացած է տպագրական նոր

կազմակերպութիւններ

եւ կը սպառէ։ ամէն տեսակ գիրքեր, մահազդեր, հանդեսներ, Երգաբերականներ, հաստանիքի հրաւիրագիրներ, նամակագրութիւններ, այլ աւարդներ, եւ տպագրութեան վերաբերեալ ամէն տեսակ պիտոյքներ։ — Տպարանին սեփական 2000է աւելի պատկերները յանախորդաց տրամադրութեան տակ են ձրի։

Անմրցելի մաքրութիւն եւ նշապահութիւն։

Գաւառներէն ալ կ'ընդունի ամէն տեսակ յանձնարարութիւններ։